



ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Երևան-0010, Հանրապետության հր., Կառավարական տուն 1

“.....” 2014 թ.

N.....

Հ Ր Ա Մ Ա Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԻՐԱՎԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մայիսի 19-ի № 633-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 12-րդ կետի դ) ենթակետով և նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2014 թվականի փետրվարի 27-ի № 150-Ա որոշման պահանջները.

հրամայում եմ՝

1. Հաստատել Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունում զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների մոնիտորինգ իրականացնելու և դրանց արձագանքելու կարգը՝ համաձայն հավելվածի:
2. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունում զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների մոնիտորինգ իրականացնելու և դրանց արձագանքելու համար պատասխանատու ստորաբաժանում սահմանել աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժինը:
3. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ ապահովել զանգվածային լրատվության միջոցների մոնիտորինգի և վերլուծության արդյունքների զետեղումը Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի ներքին էլեկտրոնային ցանցում:
4. Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարության աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնի պետին՝ ապահովել զանգվածային լրատվության միջոցների մոնիտորինգի և վերլուծության արդյունքների առաքումը էլեկտրոնային փոստով նախարարության ենթակայությամբ գործող մարմիններին:
5. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել աշխատակազմի ղեկավարին:
6. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրմանը հաջորդող օրվանից:

Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՋԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԻՐԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՐՁԱԳԱՆՔԵԼՈՒ

1. Սույնով սահմանում է ՀՀ տարածքային կառավարման նախարարության /այսուհետ՝ Նախարարություն/ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի բաժնում /այսուհետ՝ Բաժին/ զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների ամենօրյա մոնիտորինգ /այսուհետ՝ դիտարկում/ և վերլուծություն կատարելու կարգը:
2. Դիտարկման և վերլուծություն կատարելու նպատակն է արձագանքել լրատվամիջոցներում տեղ գտած այն հրապարակումներին, որոնք առնչվում ու անդրադառնում են Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարին /այսուհետ՝ Նախարար/, աշխատակազմի գործունեությանը, գործառույթներին, այլ պաշտոնատար անձանց գործունեությանը և կարող են ունենալ նաև հասարակական հնչեղություն:
3. Դիտարկումը ներառում է զանգվածային լրատվության տպագիր և էլեկտրոնային միջոցները:
4. Բաժանորդագրված մամուլի միջոցները տրամադրվում են Բաժնին՝ դիտարկում և վերլուծություն կատարելու, ինչպես նաև արխիվացնելու համար:
5. Բաժինը.
 - 1) իրականացնում է Նախարարի, աշխատակազմի գործունեությանը, գործառույթներին, աշխատակազմի այլ պաշտոնատար անձանց գործունեությանն առնչվող տպագիր և էլեկտրոնային զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների ամենօրյա դիտարկում և վերլուծություն.
 - 2) իրականացրած դիտարկման արդյունքները և կատարված վերլուծությունը նույն օրը ներկայացնում է Նախարարին.
 - 3) Նախարարի, աշխատակազմի գործունեությանը, գործառույթներին, աշխատակազմի այլ պաշտոնատար անձանց գործունեությանն առնչվող հրապարակումներին ի պատասխան՝ առավելագույնը երկու աշխատանքային օրվա ընթացքում կազմակերպում է Նախարարության արձագանքը.
 - 4) դիտարկման արդյունքները մեկ աշխատանքային օրվա ընթացքում տեղադրում է աշխատակազմի ներքին էլեկտրոնային ցանցում:
6. Բաժինը՝ Նախարարի, աշխատակազմի ղեկավարի գրավոր կամ բանավոր ցուցումի հիման վրա՝

1) պարզաբանում պահանջող հրապարակումից հետո արձագանքում է երկու աշխատանքային օրվա ընթացքում.

2) հրապարակումների վերաբերյալ պարզաբանումը կամ հերքումը իրականացնում է մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

3) պարզաբանում պահանջող հրապարակումից հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում կարող են կազմակերպվել հրապարակային քննարկումներ կամ լսումներ: